Հավելված N 2
2025 թվականի հունվարի «15»-ին կնքված
«1032-11002/2025-ՍԿ» պայմանագրի

ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N2

1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Միջոցառման անվանում | «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց տնային պայմաններում խնամքի ծառայություններ (11002)» |
| Դրամաշնորհի N | «1032-11002/2025-ՍԿ» |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ՀՀ ԱՍՀՆ |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Համագործակցության–Կամար» ԲՀԿ |
| Միջոցառման իրականացման ժամանակահատված | 03.01.2025թ.–31.12.2025թ. |
| Հաշվետու ժամանակահատված | Ապրիլ, Մայիս, Հունիս 2025թ. |
| Ներկայացման օր | 23.07.2025թ. |
| Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն) | Կարինե Ավետիսյան, կազմակերպության նախագահ |

2. Բովանդակային հաշվետվություն

2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:

Համագործակցության-Կամար ԲՀԿ-ի կողմից իրականացվող «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց տնային պայմաններում խնամքի ծառայություններ» ծրագրում հաշվետու ժամանակահատվածում շահառուների թիվը եղել է՝

- Ապրիլ 23 շահառու
- Մայիս 23 շահառու
- Հունիս 24 շահառու

Շահառուների հետ աշխատում է մասնագիտական թիմ՝ սոց.աշխատող, սոց.խնամողներ և բուժքույր:
Նախապես իրականացվել է բոլոր շահառուների անհատական կարիքի գնահատում, ըստ այդմ կազմվել է այցելությունների գրաֆիկ, որով առաջնորդվում է մասնագիտական թիմը:
Ըստ կարիքի գնահատման իրականացվում է՝

- Խնամքի, կենցաղային սպասարկման և սոցիալական ծառայությունների տրամադրում,
- Բժշկական օգնության կազմակերպում և տրամադրում,
- Սոցիալ-հոգեբանական աջակցության տրամադրում,
- Խորհրդատվության տրամադրում և ուղեկցման ծառայություններ

2.2. Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրում ներառված են 24 շահառուներ, որոնք ստացել են սոցիալական խնամքի ծառայություններ՝ համաձայն նախատեսված գրաֆիկի:
Պլանային այցելությունների ընթացքում շահառուները ստացել են հետևյալ ծառայությունները՝
**Սոց. խնամողների կողմից** իրականացվել է՝

- տան մաքրում, հարդարում,

- անկողնային պարագաների և հագուստի փոխում,
- գնումներ,
- կոմունալ վճարումներ,
- սպասքի լվացում,
- լվացքի կազմակերպում,
- լոգանք/լվացում,
- մարմնի մասնակի խնամք՝ եղունգների խնամք,
- կերակուրի պատրաստում և կերակրում,
- միջնորդական ծառայություն դեպի այլ հաստատություններ և այլն:

24 շահառու ըստ անհրաժեշտության օգտվում են կենցաղային սպասարկման և հիգիենայի պահպանման ծառայություններից: Լվացքի, լոգանքի և բնակարանի մաքրության կազմակերպման արդյունքում զգալիորեն բարելավվել է նրանց հիգիենիկ վիճակը: Գնումների կազմակերպմամբ և կոմունալ վճարումների կատարումով շահառուները ապահովվում են անհրաժեշտ ապրանքներով և ծառայություններով: Բոլոր մատուցված ծառայությունները փաստագրվում են ծառայությունների մատուցման ստուգաթերթերում և շահառուի ստորագրությամբ ամրագրվում են վերջինիս բնակության վայրում պահվող՝ տվյալ ամսվա տնային ծառայությունների թերթիկում:

Բուժքրոջ կողմից տրամադրվել է բժշկական օգնություն՝ 24 շահառուների առողջական վիճակի մշտադիտարկման և պահպանման համար: Համաձայն աշխատանքային պլանի բուժքրոջ կողմից տունայցերը իրականացվել են ըստ՝ նախապես կազմված շաբաթվա գրաֆիկի:

**Բուժքրոջ կողմից** մատուցվել են հետևյալ ծառայությունները՝

Ապրիլ՝

- Մշտադիտարկում 23 շահառու
- Արյան ճնշման չափում 23 շահառու
- Արյան մեջ շաքարի չափում 14 շահառու
- Զարկերակային հաշվում, ջերմաչափում, վերահսկում 24 շահառու
- Վիրակապում, վերքի խնամք 1 շահառու
- Միջմկանային 1 շահառու
- Դեղորայքի ստացում 19 շահառու
- Շահառուի ուղեկցում բուժհաստատություն 5 շահառու

Մայիս՝

- Մշտադիտարկում 23 շահառու
- Արյան ճնշման չափում 23 շահառու
- Արյան մեջ շաքարի չափում 10 շահառու
- Զարկերակային հաշվում, ջերմաչափում, վերահսկում 19 շահառու
- Վիրակապում, վերքի խնամք 0 շահառու
- Միջմկանային 1 շահառու
- Ներերակային, կաթիլային 0 շահառու
- Դեղորայքի ստացում 6 շահառու
- Շահառուի ուղեկցում բուժհաստատություն 2 շահառու

Հունիս՝

- Մշտադիտարկում 24 շահառու
- Արյան ճնշման չափում 24 շահառու
- Արյան մեջ շաքարի չափում 5 շահառու
- Զարկերակային հաշվում, ջերմաչափում, վերահսկում 19 շահառու
- Վիրակապում, վերքի խնամք 1 շահառու
- Միջմկանային 1 շահառու
- Դեղորայքի ստացում 2 շահառու
- Շահառուի ուղեկցում բուժհաստատություն 0 շահառու

**Սոց.աշխատողի կողմից** իրականացվել է 24 շահառուների անհատական նախնական կարիքի գնահատում: Տրամադրվել է սոցիալական խորհրդատվություն ըստ՝ շահառուների կարիքների:

Սոց.աշխատողի կողմից իրականացված տունայցերը և փաստագրվում են ծառայությունների մատուցման ստուգաթերթերում և շահառուի ստորագրությամբ ամրագրվում են վերջինիս բնակության վայրում պահվող՝ տվյալ ամսվա տնային ծառայությունների թերթիկում:

Հաշվետու ժամանակահատվածում սոց.աշխատողը իրականացրել է 24 շահառուների մշտադիտարկում, կարիքների գնահատում, ուղեգրման գործընթացի կազմակերպում, կարիքների խորքային գնահատում և յուրաքանչյուր շահառուի համար անձնական թղթապանակի կազմում:

Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)

2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են միջոցառման գործողությունների իրականացմանը:

Հաշվետու ժամանակահատվածում տարեցների տնային խնամքի ծառայությունների իրականացման գործընթացը բացահայտեց մի շարք կարևոր դիտարկումներ և փորձառություններ, ինչպես նաև ընդգծեց պետություն-ՀԿ համագործակցության նշանակությունը ծառայությունների արդյունավետ կազմակերպման գործում:

Քաղած դասեր՝

Անհատական մոտեցման կարևորություն. Յուրաքանչյուր շահառուի առանձնահատուկ կարիքների գնահատումը և անհատական խնամքի պլանի մշակումը հնարավորություն են տվել առավել արդյունավետ աջակցություն տրամադրել:

Մշտադիտարկման կարևորություն. Տունայցերի և մշտադիտարկման շնորհիվ հնարավոր է եղել արձագանքել շահառուների փոփոխվող կարիքներին և համապատասխանեցնել մատուցվող ծառայությունները:

Պետություն-ՀԿ համագործակցությունը շարունակում է կարևոր նշանակություն ունենալ տարեցների խնամքի արդյունավետ կազմակերպման հարցում: Առկա դրական փորձառությունները հստակ ցույց են տալիս, որ համակարգված փոխգործակցությունը նպաստում է ծառայությունների որակի բարձրացմանը, իսկ պարբերաբար քաղվող դասերը թույլ են տալիս շարունակաբար բարելավել խնամքի գործընթացները:

2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):

2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել միջոցառման աշխատանքային պլանով, բայց իրականացվել են միջոցառման նպատակին հասնելու համար:

| N | Անուն, ազգանուն | Բնակության հասցե | Հեռախոս | ՀԾՀ | Նշումներ |
|---|---|---|---|---|---|
| 1. | Լարիսա Տոլպակյան | Սարյան 17/4 | 094-74-88-30 | 5101620238 | |
| 2. | Ամալյա Բաղդասարյան | Սյունիքի 17/10 | 091-10-14-45 | 7209400036 | |
| 3. | Արաքսիա Գասպարյան | Գետափնյա 4/23 | - | - | Մահացած |
| 4. | Մարինե Հովսեփյան | Արցախյան խճ. 30 | 099-71-34-04 | 5514660443 | |
| 5. | Արգենտինա Դավիդյան | Մաշտոցի 151/6 | 098-00-63-52 | 7509400090 | |
| 6. | Համլիկ Մալինցյան | Սաթյան 40ա | 098-04-29-05 | 5208550261 | |
| 7. | Զեյֆուրա Աղաբեկյան | Սաթյան 32 | 041-89-89-04 | 5309480455 | |
| 8. | Կարինե Մանուչարյան | Գետափնյա 9/9 | 077-92-51-19 | 6807540051 | |
| 9. | Դոլորես Միքայելյան | Գետափնյա 4/2 | 093-57-27-19 | 52013580050 | |
| 10. | Զոյա Շեգունց | Սարյան 17ա/8 | 093-93-28-71 | 7114440014 | |
| 11. | Մարուսյա Վարդանյան | Գետափնյա 2/16 | 0284-2-06-22 | 6612310049 | |
| 12. | Ալվարդ Հայրապետյան | Խորենացի 44 | 094-96-19-60 | 5802550058 | |
| 13. | Ջեմմա Գոգորյան | Սարյան 17/2 | 098-74-70-92 | 6205490269 | |
| 14. | Արփենիկ Մկրտչյան | Գետափնյա 10/6 | 094-53-78-40 | 5107370586 | |
| 15. | Դուխիկ Մնացականյան | Գետափնյա 7/4 | 098-80-42-55 | 6805500044 | |
| 16. | Քնարիկ Արոյան | Գետափնյա 3/12 | 099-24-34-59 | 7012430109 | |
| 17. | Ռոզա Թաթարյան | Մաշտոցի 1/42 | 077-77-14-48 | 6109430037 | |
| 18. | Համլիկ Խալաֆյան | Յոլյան 21 | 099-09-30-73 | 6901470134 | |
| 19. | Կարինա Գևորգովա | Մաշտոցի 151/15 | 093-13-65-28 | 7210710329 | |
| 20. | Աստղիկ Գևորգովա | Մաշտոցի 151/15 | 093-13-65-29 | 6110370274 | |
| 21. | Սուսաննա Ղումաշյան | Գետափնյա 3/5 | - | 8009550191 | |
| 22. | Յուրի Խալաֆյան | Յոլյան 21 | 099-09-30-73 | 1107398312 | |
| 23. | Նինա Դանիելյան | Գետփնյա 8/25 | - | 6002470573 | |
| 24. | Քրիստինե Խաչունց | ՍԱՐՅԱՆ Փ. ,17 ,15 | 093471091 | 5203840067 | |

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ

Գլխավոր քարտուղար՝ Ս. Մուրադյան

-------------------------------------------

(ստորագրություն)

Կ.Տ.

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

Նախագահ՝ Կ. Ավետիսյան

-------------------------------------------

(ստորագրություն)

Կ.Տ.